

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N ՓՎ/176-2023

ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿԱՅԱՑԱԾ՝ ՀՅՈՒՄԻՍ-ՀԱՐԱՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ, Մ-6, ՎԱՆԱՁՈՐ-ԱԼԱՎԵՐԴԻ-ՎՐԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՄՈՔԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ (ԿՄ 38+450 ԿՄ 90 + 191 ՀԱՏՎԱԾ) ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ, ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան  
Մասնակցում էին՝

Տ. Խաչատրյան	ՀՀ փոխվարչապետ
Գ. Սանոսյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Հ. Սիմիդյան	ՀՀ շրջակա միջավայրի նախարար
Գ. Մինասյան	ՀՀ արդարադատության նախարար
Վ. Քերոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարար
Ս. Թովմասյան	Կադաստրի կոմիտեի ղեկավար
Ք. Ղալեչյան	ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ
Ա. Փամբուխչյան	Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ
Ա. Սարգսյան	Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի խորհրդական
Գ. Ավետիսյան	«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն
Վ. Կարապետյան	«Երևանի կառուցապատման ներդրումային ծրագրերի իրականացման գրասենյակ» ՀՈԱԿ-ի տնօրենի տեղակալ, քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի ղեկավարի պարտականությունները կատարող

**Օրակարգային 1-ին հարց՝** Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4, Քաջարան-Ագարակ հատվածի Անկախ բնապահպանական մոնիթորինգի ծառայությունների ձեռքբերման վերաբերյալ

**Որոշվեց՝**

1. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4, Անկախ բնապահպանական մոնիթորինգի ծառայությունների ձեռքբերման տեխնիկական առաջադրանքը:
2. Հաստատել Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4 ծրագրի գնումների պլանը:
3. Հանձնարարել «Ճանապարհային դեպարտամենտ» Հիմնադրամին Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր – Ծրագիր 4 շրջանակներում Անկախ բնապահպանական մոնիթորինգ իրականացնող Անհատ խորհրդատուի

ծառայություններ ձեռքբերման նպատակով կազմակերպել գնման ընթացակարգ՝ միջազգային ընթացակարգերին համապատասխան:

**Օրակարգային 2-րդ հարց՝** Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագիր - Տրանշ 3՝ Թալին-Լանջիկ հատվածի No T3-CW-01 պայմանագրի N10 փոփոխման հրահանգի վերաբերյալ

**Որոշվեց՝**

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցքի զարգացման ծրագիր - Տրանշ 3՝ Թալին - Լանջիկ (կմ 71+500 – կմ 90+200) շրջանակներում 25.05.2016թ «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ հետ կնքված շինարարական աշխատանքների T3-CW-01 պայմանագրի N10 փոփոխման հրահանգը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գ. Ավետիսյանին՝ գործող կարգին համապատասխան «Սինոհիդրո Քորփորեյշն» ՍՊԸ-ի հետ սեղմ ժամկետում ստորագրել 25.05.2016թ կնքված թիվ T3-CW-02 պայմանագրի N10 փոփոխման հրահանգը:

**Օրակարգային 3-րդ հարց՝** Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N6 փոփոխման հրահանգի վերաբերյալ

**Որոշվեց՝**

1. Հաստատել Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող Հայաստան-Վրաստան սահմանային տարածաշրջանային ճանապարհի (Մ6 Վանաձոր-Բագրատաշեն) բարելավման ծրագրի շրջանակներում 2017թ. նոյեմբերի 30-ին «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկության հետ կնքված շինարարական աշխատանքների CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N6 փոփոխման հրահանգը:
2. «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամի գործադիր տնօրեն Գ.Ավետիսյանին՝ գործող կարգին համապատասխան «Բլաք Սի գրուպ և ԱԱԲ Պրոեկտ» համատեղ ձեռնարկության հետ սեղմ ժամկետում ստորագրել 2017թ. նոյեմբերի 30-ին կնքված թիվ CW-ICB-M6/2016-2 պայմանագրի N6 փոփոխման հրահանգը: